



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 20 ՆՈՎԵՄԲԵՐ, 2017

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, ԿՐՐ Ինձ Իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո լամենայն ժամ. Ի չար խորհրդոց, Ի բանից եւ Ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ Ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 40

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՂՈԹՔ

Համբերութեամբ սպասեցի Տիրոջ,
 եւ ան եկաւ օգնութեան, լսեց իմ աղաչանքս:
 Զիս դուրս հանեց փառապանքի գուբէն ու ճահիճէն,
 ժայռի վրայ կանգնեցուց, ամրապնդեց քայլերս,
 եւ շրթներուս վրայ դրաւ նոր երգ մը, օրհնութեան երգ՝ մեր Աստուծոյն:
 Շարեր պիտի տեսնեն եւ ահով լեցուին, եւ Տիրոջ պիտի վստահին:
 Երանի այն մարդուն, որ Տիրոջ կը վստահի,
 եւ չի կռթնիր սուտ աստուածներուն,
 ոչ ալ անոնց՝ որոնք ստուգեան կը հետեւին:
 Ինչ հրաշալի են գործերը որ ըրիր մեզի համար, ով Տէր, Աստուածս,
 եւ քու ծրագիրներդ՝ որ մեզի համար պատրաստեցիր.
 չկայ մէկը քեզի նման:
 Պիտի ուզէի հռչակել ու պատմել զանոնք, բայց այնքան շար են ու անթիւ:
 Զոհ եւ ընծայ չկամեցար, ողջակէզ կամ մեղքի համար զոհ չպահանջեցիր,
 այլ՝ ականջներս բացիր, որ քեզ լսեմ:
 Ինչքան կ'ուզեմ ես քու կամքդ կատարեր, ով իմ Աստուած.
 Օրէնքդ իմ սրտիս մէջ է:
 Արդարութիւնդ սրտիս մէջ ծածկած չպահեցի,
 հաւատարմութեանդ եւ փրկութեանդ մասին խօսեցայ միշտ,
 եւ ժողովուրդիդ հաւաքոյթին մէջ վկայեցի
 քու սիրոյդ եւ հաւատարմութեանդ մասին:
 Ուստի դուն, Տէր, գթութիւնդ մի՛ վլանար ինձի.
 քու սէրդ եւ ողորմութիւնդ թող տեսարար պահպանեն Կիս:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատարբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղէրոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱՊԿԱՆ ՆԱՄԱԿԷՆ

4:7-19

ԵՐԱՆԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԱՐ ՉԱՐՉԱՐՈՒՈՂՆԵՐՈՒՆ (4:12-19)

Պեպրոս Առաքեալ զգաստութեան ու արթնութեան կոչ կ'ուղղէ իր հաւարացեալներուն, որպէսզի միշտ պարբարաւ ըլլան ամէն ինչի, որովհետեւ կ'ապրին այնպիսի ժամանակահատուածի մը մէջ, ուր ամէն բանի վախճանը մօտեցեր է: Մօտեցեր է մանաւանդ, քրիստոնեայ հաւարացեալին համար ժամանակ հասկացողութիւնը իր աւարտին հասնող ընթացք մըն է, որովհետեւ ան անհամբեր սպասումով կը պարբարարուի դիմաւորելու համար Տէրն ու Փրկիչը՝ Յիսուս Քրիստոսը: Անոր համար ալ ժամանակները որքան ալ մենք հաշուենք դէպի յառաջ, սակայն, խորքին մէջ աւարտի գացող ընթացք մըն է: Այս երեւոյթը նկատի առած, իւրաքանչիւր հաւարացեալ նաեւ պէտք է ըստ այնմ մտաբանութեամբ իրեն փրկուած բազմապէսակ պարգեւները, որպէս անոնց իրաւ փոխարէն, որովհետեւ անոնք փեսանելի նշաններ են հաւարացեալի կեանքին մէջ, ինչպէս նաեւ Եկեղեցոյ կեանքին մէջ: Այդ նշանները ցոյց կու տան կենդանութիւն, առողջ վիճակ: Այդ պարգեւներով նաեւ Աստուած փառաւորուելու համար, Յիսուս Քրիստոսի միջոցաւ: Այս բազմապէսակ պարգեւներուն ամենակարեւորն ու հիմնականը Սիրոյ պարգեւը, շնորհքը, ինչ Պօղոս Առաքեալն ալ պիտի ըսէ. «**Չնորհներուն ամենակարեւորը հաւաքք, յոյս, սէր, եւ այս երեքէն ամենակարեւորը՝ Սէրն է**» (Ա Կորնթ 13):

Առաքեալը կը շարունակէ նորէն խօսելու փորձութիւններու մասին, այս անգամ յիշեցնելով, որ այդ փորձութիւնները փարօրինակ չհամարել, մանաւանդ՝ երբ այդ փորձութիւնը կրակի պէս կ'այրէ: Այսպէս այրելը իր դրական իմաստովը, որովհետեւ կրակը երբ այրէ ունի հետեւեալ յարկութիւնները.

1. փճացնելու
2. մաքրելու
3. լուսաւորելու

Ուստի, Պեպրոս Առաքեալ կու գայ ըսելու, թէ այդ փորձութիւնը առիթ է քեզ ոչ թէ փճացնելու, այլ՝ մաքրելու, գրելու, ինչպէս որ ոսկին կրակէ կ'անցնէն որպէսզի մաքրի ու գրուի բոլոր փեսակի ախարերէ ու աղտերէ: Արդեօք նմանութիւն չկայ Քրիստոսի այն խօսքին հետ երբ կ'ըսէ. «**Երանի ձեզի, երբ մարդիկ նախապէս եւ հալածեն ձեզ, կամ սրելով՝ ձեր մասին ամէն փեսակի զրպարարութիւն ընեն իմ հետեւորդներս ըլլալուն համար: Յնձացէք եւ ուրախացէք, որովհետեւ ձեր վարձարարութիւնը մեծ է երկինք մէջ: Յիշեցէք որ նոյն ձեռով հալածանքի ենթարկուեցան ձեզմէ առաջ ապրող մարգարէներն ալ**» (Մտք 5:11-12):

Այսօր մի գուցէ նոյն այդ փորձութիւններն ու չարչարանքները կրնան չունենալ, ինչու չէ նաեւ շարերն ալ չունին, բայց անոնք պիտի գան, որովհետեւ Քրիստոս յարակօրէն յիշեցուց ըսելով. փորձութիւնները կան ու պիտի ըլլան, բայց դուք պարբարար եղէք: Ահաւասիկ, Առաքեալին այս պարգեւները ուրիշ բան չեն եթէ ոչ մեզ պարբարարող գալիք այդ փորձութիւններուն, երբոր իւրաքանչիւրիս դռները թակէ: Առաւել եւս, ոչ թէ միայն մենք եթէ այդ փորձութիւններուն դիմացանք, այլ եթէ ուրիշներ հարց փոխին թէ ինչպէս կ'ընմբռնես այս բոլորը, ահա այն ժամանակ ի՞նչ պարբարարան ունինք փալիք, որպէս վկայութիւն: Պեպրոս Առաքեալ իր իսկ կեանքի փորձութեան լոյսին փակ ահա այս նամակը կը գրէ, որովհետեւ ինք անձամբ անցաւ այդ բոլորէն:

Ա. Չառով փորձութիւնները փարօրինակ չեն: Թէ ինչ փորձութիւններէ կ'անցնէին յարակ չենք գիտեր, չնայած 1:6 մէջ Պեպրոս Առաքեալ կ'ըսէ պէս-պէս փորձութիւններ, բայց յարակօրէն կ'ըսէ թէ ինչո՞ւ կ'անցնին այսպիսի փորձութիւններէն: Յիսուսի անունին համար, որուն կը պարկանինք, եւ երկրորդ՝ որպէս քրիստոնեաներ: Այս փորձութիւններուն մէջ Աստուած նպարակ մը ունի:

Բ. Ի՞նչ ձեռով կարելի է այս փորձութիւնները դիմաց կանգնիլ, ի՞նչ ընել:

1. Ուրախանանք, որ Քրիստոսի չարչարանքներուն մասնակից ենք: Որ կը նշանակէ Քրիստոսի չարչարանքները կը շարունակուին, որուն մասնակից ենք մենք:
2. Չամչնանք այդ փորձութիւններուն համար: Չամչնալուն օրինակը Պեպրոս Առաքեալ ինք եղաւ:
3. Տէրը փառաւորենք:
4. Միշտ վստահինք որ Տէրը հոն է, եւ ոչ թէ նաւուն յետսակողմը կը քնանայ:

5. Շարունակենք բարեգործություն ընել: Այլապես փորձությունները կրնան պարճառ դառնալ որ մեքն դադրինք բարեգործություն ընել: Շարունակենք հաւաքարին մնալու Արարիչին եւ շարունակելու մեր բարեգործությունը:

Գ. Ի՞նչ սպասել փորձություններէն:

1. Երանելի ենք: Այդ փորձութեան մէջ նաեւ օրհնություն կայ: Կը նշանակէ, պիտի ըստ Առաքեալը, «Աստուծոյ փառաւորիչ Հոգին ձեր վրայ հանգած է» (14 հմբ): Ասով շնորհակալութիւն յայտնելու Աստուծոյ այդ փորձութեան համար: Այո, քիչ մը փարօրինակ կը հնչէ, բայց այս է որ Պետրոս Առաքեալ կը ներկայացնէ անով զօրացնելու եւ քաջալերելու հաւաքացեալներ, որպէսզի հասնին այն փառքին որ պատրաստուած է: Պօղոս Առաքեալ մէկ այլ ուրիշ ձեւով կը ներկայացնէ, որպէս մարգիկ իր մկանները կը պրկէ ձեռք ձգելու համար կորստական մրցանակը, որքան առաւել անոնք որոնք ձեռք պիտի ձգենք յաւիտենական մրցանակը: Օրինակ, երբ կը կարդանք Գործք Առաքելոց գիրքը, հոն ուր կը ներկայացնէ Սրբեփանոս Սարկաւագի քարկոծումը, «Արեանին մէջ նստողները իրենց հայեացքը Սրբեփանոսի դարձուցին եւ րեսան անոր դէմքը, որ հրեշտակի դէմքի կը նմանէր» (6:15): Որո՞ւ դէմքը հրեշտակի կը նմանի երբ նեղութեան ու հալածանքի մէջ ըլլանք:
2. Գալիք փառքին մասնկացութիւնը: Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «Ներկայ ժամանակի նեղութիւնները, չարչարանքները ոչինչ են գալիք փառքին քով» (Հռոմ 8:18): Ահա երբոր կրնանք ամբողջ պատկերը րեսնել Աստուծոյ պատրաստած փրկութեան, այն արեւն է որ կրնանք մեր նեղութիւններուն մէջ ուրախանալ, ինչպէս պիտի ըստ Պետրոս Առաքեալ: Ուր այլեւս հոն ցաւ ու լաց չկայ:

Ուրեմն, այնպէս մը ապրինք, նոյնիսկ մեր նեղութիւններուն ու չարչարանքներուն մէջ, որպէսզի երբ Աստուած դարաստան րեսնէ, որ Իր իսկ րունէն պիտի սկսի արժանի ըլլանք յաւիտենական կեանքին: Անխուսափելիօրէն Աստուած դարաստան պիտի րեսնէ, եւ այդ ալ արդար դարաստան: Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «Ձեր համբերութիւնն ու հաւաքը ապացոյցը պիտի ըլլան Աստուծոյ արդար դարաստանին, որովհետեւ դուք արժանի պիտի ըլլաք Աստուծոյ արքայութեան, որուն համար այդքան կը րանջուիք: Արդարեւ, Աստուծոյ համար արդարութիւն պիտի ըլլայ ձեզ չարչարողները րանջանքով պարժել, իսկ ձեզի՝ րանջուածներուդ՝ հանգիստ պարգեւել մեզի հետ միասին, երբ մեր Տէրը Յիսուս հրեշտակներու իր բանակով երկինքէն յայտնուի: Անիկա բոցավառ կրակով պիտի պարժէ անոնք՝ որոնք կը մերժեն զԱստուած ճանչնալ եւ հնազանդիլ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Աւերարանին: Այն օրը, այդպիսիները յաւիտենական մահուամբ պիտի պարժուին, զրկուելով Տիրոջ ներկայութենէն եւ անոր փառաւոր զօրութենէն, երբ անիկա գայ իր սուրբերուն մէջ փառաւորուելու եւ բոլոր իրեն հաւաքացողներուն հիացումին առարկան ըլլալու» (Բ Թեսալ 1:5-10):

Պահապան ամենայնի Քրիստոս,
*աջ քո հոովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ րազմամեղիս:*